ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-8-4-Ա

ք. Երևան 24.08.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի օգոստոսի 24-ի նիստում քննարկեց 2023 թվականի ապրիլի 12-ին լիազորված անձ Անժելա Աբրահամյանի կողմից ներկայացված «Օդին դոմ» ՍՊԸ ընկերության (299014 g. Sevastopol, Kamishovoe ul., t. 40, taracq 111-34, 35, RU) «THE CARAHUNG ԿԱՐԱՒՆՋ» (No20221131) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 7-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ, 4-րդ, 7-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական պրակտիկայում կամ առևտրային պրակտիկայում և, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ բացառապես բաղկացած է «The Carahunge», «ԿԱՐԱՒՆՋ» գրառումներից, որոնք հանդիսանում են ՔԱՐԱՀՈՒՆՋ բառի անգլերեն և ռուսերեն տարբերակները: «ՔԱՐԱՀՈՒՆՋ»-ը բացի այն փաստից, որ Սյունիքի մարզում գտնվող գյուղի անվանում է, այն նաև խոսակցական պրակտիկայում հանրության մոտ առաջին հերթին նույնացվում է հանրահայտ թթի օղու հետ, ուստի նիշը խնդրարկված 33-րդ դասի «օղի» ապրանքի համար հանդիսանում է նկարագրական բնույթի նիշ՝ նշելով

ապրանքի տեսակը: Ուստի Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես ապրանքային նշաններ: Ինչ վերաբերում է խնդրարկված 32-րդ դասի ապրանքներին և 33-րդ դասի մնացած բոլոր ապրանքներին բացի վերը նշվածից, ապա հայտարկված նիշը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի վերաբերյալ հարցում՝ հաղորդելով կոնկրետ տեղեկատվություն ապրանքի տեսակի վերաբերյալ: Ինչպես նաև «The Carahunge», «ԿԱՐԱՍՆԺ» բառերը ներառող նիշը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանք արտադրողի վերաբերյալ հարցերում, քանի որ հայտատուն հանդիսանում է ռուսական «Օդին դոմ» ՍՊ ընկերությունը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 7-րդ կետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական պրակտիկայում կամ առևտրային պրակտիկայում և, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ բացառապես բաղկացած է «The Carahunge», «ԿԱՐԱՍՆԺ» գրառումներից, որոնք հանդիսանում են ՔԱՐԱՀՈՒՆՋ բառի անգլերեն և ռուսերեն տարբերակները: «ՔԱՐԱՀՈՒՆՋ»-ը բացի այն փաստից, որ Սյունիքի մարզում գտնվող գյուղի անվանում է, այն նաև խոսակցական պրակտիկայում հանրության մոտ առաջին հերթին նույնացվում է հանրությանը հայտնի թթի օղու հետ, ուստի նիշը խնդրարկված 33-րդ դասի «օղի» ապրանքի համար հանդիսանում է նկարագրական բնույթի նիշ՝ նշելով ապրանքի տեսակը:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Լիազորված անձ Անժելա Աբրահամյանի կողմից ներկայացված «Օդին դոմ» ՍՊԸ ընկերության «THE CARAHUNG ԿԱՐԱՎԱՆ» (No20221131) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ